

**ՏԻՆԼԱՆԴԻԱՅԻ
ՊԱՏԱՌԻՅՈՒՆ**

Henrik Meinander

**A HISTORY
OF FINLAND**

Հենրիկ Մեյնանդեր

Երջանկության քաղաքական գինը

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՏԱՌԹՅՈՒՆ

Թարգմանությունն անգլերենից՝
Դավիթ Սարգսյանի



ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 94(480)
ԳՄԴ 63.3(4Ֆ)
Մ 606

Մեյնանդեր Հենրիկ
Մ 606 Ֆինլանդիայի պատմություն / Հենրիկ Մեյնանդեր.- Եր.:
Newmag, 2024.- 416 էջ:

Հենրիկ Մեյնանդերը պարզ ու գրավիչ լեզվով պատմում է Ֆինլանդիայի ամբողջ պատմությունը: Հանգամանալից նկարագրում է, թե ինչպես է առաջացել ֆինն ժողովուրդը, համաշխարհային պատմության համատեքստում ինչպես է ձևավորվել ֆիննական ինքնությունը: Գիրքը բացահայտում է ֆիննական հրաշքի գաղտնիքը. ռուսական կայսրության շվեդական ծայրամասն ինչպե՞ս դարձավ ինքնավար դքսություն: Արևմուտքի ու Արևելքի շահերի բախման կիզակետում գտնվելով՝ ինչպես փրկվեց 20-րդ դարում ու ինչպես դարձավ տեխնոլոգիական առաջատար երկիր: Հայերեն թարգմանության կապակցությամբ հեղինակը լրամշակել է գրքի վերջին գլուխը և ներկայացրել Ֆինլանդիայի համար 2023-ի կարևորագույն իրադարձությունը՝ ՆԱՏՕ-ի անդամ դառնալը:

ՀՏԴ 94(480)
ԳՄԴ 63.3(4Ֆ)

ISBN 978-9939-967-27-1

Հենրիկ Մեյնանդեր «Ֆինլանդիայի պատմություն» © 2024, «Նյու Մեգ» ՍՊԸ

Finlandshistoria© Henrik Meinander, 2006, 2017, 2023

Published originally in Swedish by Schildts&Söderströms

Published by agreement with Helsinki Literary Agency (Helsinki, Finland)

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել Հելսինկիի գրական գործակալության հետ կնքած պայմանագրով:

ԳՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Ֆինլանդիայի
արտաքին գործերի նախարարություն



**Ministry for Foreign
Affairs of Finland**

um.fi

«Ֆիննի» ապրանքանիշ



Finni.am

Բովանդակություն

Նախաբան	9
<i>Գլուխ 1</i> Սկիզբ	17
<i>Գլուխ 2</i> Իշխանապետության ծնունդը	46
<i>Գլուխ 3</i> Հյուսիսի Մեծ տերությունը	78
<i>Գլուխ 4</i> Ստոկհոլմ-Սանկտ Պետերբուրգ	114
<i>Գլուխ 5</i> Ռուսական խաղաղության դարաշրջանը	154
<i>Գլուխ 6</i> Աճող ինքնավարություն	195
<i>Գլուխ 7</i> Պատերազմ և անկախություն	245
<i>Գլուխ 8</i> Բարեկեցություն և չեզոքություն	308
<i>Գլուխ 9</i> Ֆինլանդիան ու Եվրոպան	367
Պատկերների հեղինակներ և սկզբնաղբյուրներ	405
Գրականության ցանկ	409

Նախաբան

2006 թվականին առաջին հրատարակությունից հետո գիրքը թարգմանվել է 18 լեզվով: Երախտապարտ ու հպարտ եմ այս միջազգայնացման համար: Հասկանում եմ, որ աշխարհում գրքի նման տարածումը չի կարող լինել իմ, որպես պատմաբանի, շնորհքը, կամ Ֆինլանդիայի հանդեպ առանձնահատուկ հետաքրքրությունը: Պատճառն այն է, որ Եվրոպայի հյուսիս-արևելքում ուժեղ Ռուսաստանի կողքին գտնվող մի աղքատ երկիր կարողացավ պահպանել իր մշակույթն ու լեզուն, ձեռք բերել ու պաշտպանել իր անկախությունը, կառուցել կայուն ու ժողովրդավարական հասարակություն: Սա է առաջացնում բնական հետաքրքրություն:

Ես «Ֆինլանդիայի պատմությունը» գրեցի՝ ընթերցողի դերում պատկերացնելով իմ հայրենակիցներին ու սկանդինավցի հարևաններին: Սակայն ամեն անգամ, երբ գիրքը հրատարակվում էր մի նոր լեզվով, փորձում էի հասկանալ, թե տեքստն ու փաստարկներն ընկալելի՞ են տվյալ լեզվով ընթերցողների համար: Ինձ համար մեկ այլ խնդիր էր այն, որ պատմական այսօրինակ սինթեզի որևէ փորձ ենթադրում է հետազոտական դաշտի անդադար ընդլայնում: Անցած 25 տարում որակավորված ու ակտիվ պատմաբաններն աշխարհում բազմապատկվել են, ու քանի որ նրանց մեծամասնությունը մասնագիտացել է իր երկրի կամ տարածաշրջանի

պատմության ոլորտում, ազգային պատմության ուսումնասիրման նյութն ավելացել է երկրաչափական պրոգրեսիայով:

Բայց ամենամեծ խնդիրը թերևս այն է, թե ազգային ընդհանուր պատմություն գրելն առհասարակ արդարացվա՞ծ է, թե՞ այլևս՝ ոչ: Արդեն մի քանի տասնամյակ պատմագիտությունն ազգային դիտանկյունից ուսումնասիրելը կասկածի տակ առնելու ընդգծված միտում կա աշխարհում: Դրա փոխարեն ավելի խրախուսելի է անցյալը տարածաշրջանային, վերազգային կամ գլոբալ դիտանկյուններից ուսումնասիրելը: Այս բանավեճում վերջին կարծիքն արտահայտել են պոստմոդեռն պատմաբանները, որոնք ազգային հետազոտությունները նկարագրել են որպես կոլեկտիվ ինքնակենսագրություններ, այլ խոսքով՝ գաղափարախոսության պտուղ՝ մաքուր ու պարզ:

Այս գիրքը յուրատեսակ պատասխան է այս հարցերին: Կա ազգային պատմություն շարադրելու ակնհայտ անհրաժեշտություն, պատմություններ, որոնցում վերջին հետազոտությունների արդյունքները կարող են ներկայացվել սեղմ լուսաբանմամբ: Բազմաթիվ մասնագիտությունների դեպքում պրոֆեսիոնալ լրագրողները նյութը զգալի չափով համապատասխանեցնում են լսարանին: Եթե պատմաբաններն իրենց սոցիալական պատասխանատվությանը լրջորեն վերաբերվեն, ապա նրանք նույնպես պետք է իրենց գործն անեն նոր գիտելիքի այս «թարգմանության» գործում՝ այն դարձնելով ավելի ընկալելի, որոշակի պարբերականությամբ հրապարակելով իրենց առարկայի շրջանակում կուտակված գիտելիքի ընդհանրական ակնարկներն ու սինթեզները: Սա ենթադրում է անձնական պրոֆեսիոնալ գիտելիքի մշտական թեստավո-

րում, տվյալ պատմության համար անհրաժեշտ մարդկանց, վայրերի ու ժամկետների ընտրության անհրաժեշտություն և այդ պատմությունը հասկանալի դարձնելն արգելակող կամ նույնիսկ շեղող ամեն ինչից հրաժարում: Այս ձևով ներկայացվող պատմության կառուցվածքը բազմաթիվ ընթերցողների հասանելի լինելու գործի անքակտելի մասն է:

Եթե պատմաբանը հաջողության է հասնում այստեղ, ապա հնարավոր է գրել ազգային պատմություն, որը նաև կարտացուլի հայրենասիրական այս մեծ պատումի գաղափարական կամ առասպելաբանական հարթությունները: Ազգի անցյալի հանդեպ քննադատական կամ ապակառուցողական մոտեցումը չպետք է ենթադրի ազգային պատմությունից հրաժարում, ոչ էլ ազգային վերելքի ու անկման համար նախկինում նշանակալի համարվող պատմական գործընթացների կամ իրադարձությունների արհամարհում: Մյուս կողմից, պատմականորեն կապակցված պատմությունը հաճախ ամենապարզ ու ամենաողջամիտ մեթոդն է, որով ընթերցողին կարելի է հայտնել, որ ազգային մշակույթը և միասնությունը մեծ մասամբ արհեստական համոզմունքներ են:

Անցած երեք տասնամյակում Ֆինլանդիայի պատմությանը նվիրված մի քանի կարևոր հետազոտություններ են հրապարակվել: Դրանցից ամենահայտնիներն են ֆինլանդացի պատմաբաններ Պենտի Վիրանկոսկիի և Ջուլյո Վահտոլայի ֆիններեն մենագրությունները, որոնցից յուրաքանչյուրը սպառիչ է և՛ բովանդակության, և՛ ծավալի առումով: Ավելի սահմանափակ ծավալով և մի փոքր հին չափանիշներով գրված աշխատանք է Օսմո Ջուսսիլայի և մյուսների՝ 1809-1999 թթ. Ֆինլանդիայի պատմությունը՝ «Մեծ դքսությունից ժամանակակից

ռուցեց լիարժեք գործող, բարեկեցիկ պետություն: Այս տարածքի տնտեսական, սոցիալական, մշակութային կառուցվածքների և ռեսուրսների ուսումնասիրության համար կան ծանրակշիռ պատճառներ: Քաղաքական-առևտրային շահերը, մեծ տերությունների բախումներն ու տեխնոլոգիական առաջընթացն անկասկած հիմնարար ազդեցություն են գործել Ֆինլանդիայի զարգացման վրա: Բայց շղթայական այս ռեակցիաների ազդեցությունը կարող է բացատրվել միայն սոցիալական գերիշխող պայմանները խորապես ըմբռնելու դեպքում:

20-րդ դարը շեշտել էմ գիտակցաբար: Միայն այդ դարում Ֆինլանդիան քաղաքական միավոր դարձավ՝ սոցիալական սեփական համակարգով: Դրանից առաջ քաղաքական ու տնտեսական որոշումները հիմնականում կայացվում էին Ստոկհոլմում և Սանկտ Պետերբուրգում: Հետևաբար շատ պատճառներ կան, որ Ֆինլանդիայի պատմությունը մինչև 20-րդ դարը դիտարկվի որպես Շվեդիայի ու Ռուսաստանի պատմության մաս: Գրքում այս կապերը, իհարկե, նույնպես քննվում են տարբեր տեսանկյուններից, սակայն, ամեն դեպքում, 21-րդ դարի ընթերցողին ավելի շատ կհետաքրքրի, թե 1917-ին անկախ հանրապետություն դառնալուց հետո Ֆինլանդիայում ինչ աստիճանի է մնացել, վերափոխվել կամ զսպվել շվեդական և ռուսական ազդեցությունը: Ի վերջո, այսօրվա Ֆինլանդիան այս փոխակերպման արդյունքն է:

Գրքում համեմատաբար մեծ տեղ է հատկացվում Երկրորդ աշխարհամարտից հետո տեղի ունեցած իրադարձություններին ու, հատկապես, վերջին երեք տասնամյակներին, որովհետև Ֆինլանդիայի պատմության վերաբերյալ նախկինում հրապարակված հետազոտությունները միտված են եղել

վերջին տասնամյակները միայն դրական լույսի ներքո ներկայացնելուն: Այս ժամանակաշրջանը թերհետազոտված է. բազմաթիվ պատմաբաններ զգուշանում են ժամանակակից պատմությունն ուսումնասիրելուց, քանի որ ժամանակավրեպ դատողություններ անելու ռիսկը մեծ է: Այդ վտանգը, իհարկե, կա, սակայն կարծում եմ, որ պատմաբանները պետք է հնարավորին չափ շուտ մուտք գործեն այս դաշտում ներկայացնեն իրենց մեկնաբանությունները, ինչը, հույս ունեմ, շատ ավելի պատշաճ հիմք կունենա ու շատ ավելի մեծ անկախություն, քան մեր անմիջական անցյալի վերաբերյալ լրագրողական գրականությունը: Միևնույն ժամանակ չեմ կարծում, թե իմ տեսակետն ու ընկալումը միակ ձգնարիտն են: Գիրքը կոչվում է ոչ թե «Ֆինլանդիայի պատմությունը» այլ «Ֆինլանդիայի պատմություն»:

Այս գիրքը ցույց է տալիս, թե ինչպես Ֆինլանդիան, լինելով շվեդական թագավորության բաղկացուցիչ մաս, հետո էլ՝ Ռուսական ինքնավար Մեծ դքսություն, վերածվեց ազգային առանձին պետության՝ այդ ճանապարհին մշտական, երբեմն դրամատիկ փոխազդեցություններ ունենալով Բալթյան տարածաշրջանի մյուս հատվածների ու, ընդհանուր առմամբ, եվրոպայի հետ: Ֆինլանդիայի դեպքում առանձնահատուկ կամ տիպիկ երևույթները ցույց տալու համար պարբերաբար վերադառնում եմ հարցին, թե ինչպես են շահագործվել երկրի բնական ու մարդկային ռեսուրսները, և ինչպես են երկրի մշակութային առանձնահատկություններն ու տեխնոլոգիաներն ազդել դրա զարգացման վրա: Կարճ ասած, այս գիրքը Ֆինլանդիան Բալթյան տարածաշրջանում և պատմական բազմաթիվ կոնտեքստներում դիտարկելու փորձ է՝ ցույց տա-

լով, թե ինչպես ձևավորվեց նոր հազարամյակի սկզբի ֆինլանդական հասարակությունը:

Գրքի գրականության ցանկում կտեսնեք, իմ կարծիքով, ամենատեղին նյութերը, սակայն այս ցանկը հեռու է սպառնիչ լինելուց: Տեքստն այս կամ այն չափով արտացոլում է իմ՝ գրող-հետազոտողիս կուտակած գիտելիքը, հետևաբար՝ կրում է իմ անձնական մեկնաբանությունների ազդեցությունը: Քանի որ գրքի պոտենցիալ ընթերցողների մեծ մասը ֆիններեն կամ շվեդերեն չգիտի, փորձել եմ կազմել անգլալեզու գրականության ցանկ՝ ներառելով և՛ գրքեր, և՛ հոդվածներ: Այս նյութերը, սակայն, շատ չեն: Ֆինլանդացի պատմաբաններն իրենց աշխատանքներն առայսօր հիմնականում հրապարակում են մայրենի լեզվով, թեև վերջին տասնամյակներում վիճակը զգալի բարելավվել է՝ հաշվի առնելով այն, որ նոր սերնդի գիտնականների շրջանում անընդհատ աճում է անգլերեն հրատարակվելու միտումը:

Շատ ուրախ եմ, որ Newmag հրատարակչությունը՝ Արտակ Ալեքսանյանի գլխավորությամբ, որոշել է գիրքս հրատարակել հայերեն: Մեր երկրներն իրարից հեռու են, սակայն մենք ունենք պատմական որոշ ընդհանրություններ: Ե՛վ Ֆինլանդիան, և՛ Հայաստանը եղել են մեծ տերությունների մաս, պայքարել են սեփական մշակույթը, արժեքներն ու ապրելակերպը պահպանելու համար և ցուցաբերած խիզախության շնորհիվ ու ճակատագրի բերումով հասել են անկախության: Գիրքը հայերեն թարգմանել է Դավիթ Սարգսյանը, որին ևս հայտնում եմ իմ երախտագիտությունը:

Հենրիկ Մեյնանդեր
Հոկտեմբեր, 2023, Հելսինկի

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark 